

ՀԱՅԵՐԸ ԼԵՒԱՍՏԱՆՈՒՄ. ՆՈՐ ՀԱՄԱՅՆՔ (1990-2007 ԹԹ.)

ՄԱՉԵՅ ԶՈՆԲԵԿ

Դեպի Լեհաստան հայերի արտագաղթի երեք փուլերը: Հայերի՝ Լեհաստան գաղթելու ավանդույթուն առանձնանուն է երեք փուլ: Առաջինը, որը, ըստ լեհական տեսակետի, ամենակարևորն է, սկսվում է միջնադարից և ձգվում մինչև տասնյոթերորդ դար: Օգտագործելով արևելյան ապրանքների նկատմամբ եվրոպացիների հետաքրքրվածությունը՝ հայերը տարածվեցին Լեհաստանի Հանրապետության խորքը՝ թաթարների բնակության վայրերին զուգահեռ՝ հաստատելով իրենց առևտրական կետերը: Այդ փուլի ներկայացուցիչները հիմնականում բնակվեցին նախկին Լեհաստանի Հանրապետության հարավ-արևելքում, այսինքն՝ ներկայիս Ուկրաինայի տարածքում և Կամենեց-Պոդոլսկի, Լվով ու Ջամոստ քաղաքները դարձրին հիմնական կենտրոններ:

Արտագաղթի երկրորդ ալիքը կապված էր երկրորդ համաշխարհային պատերազմից հետո գրավված արևելյան տարածքներից դեպի հետպատերազմյան Լեհաստանի սահմաններ հայերի տեղափոխվելու հետ (հիմնականում՝ Կրակով, Վարշավա, Գդանսկ, Վրոցլավ): Այս վերաբնակեցումը կատարվեց լեհական բնակչության սովոր զանգվածի հետ միասին:

Իսկ երրորդ ժամանակակից փուլը սկսվեց նախկին Խորհրդային Հայաստանից եկած արտագաղթածներով, որոնք Լեհաստանի տարածք մուտք գործեցին հիմնականում 1990-1996 թվականներին:

Առաջին ալիքի արտագաղթածների ներդրումը Լեհաստանի պատմության և մշակույթի մեջ հսկայական է և հասարակության կողմից գնահատված: Հայերը Լեհաստանում դարերով ընդունված են եղել որպես բարձր կրթությամբ, հասարակական բարձր պաշտոններ զբաղեցնող խումբ, որոնք կարողանում են շատ արագ ինտեգրվել հասարակությանը: Մինչև երկրորդ համաշխարհային պատերազմը հայկական շատ միություններ պահպանել էին իրենց ազգային ինքնությունն ու մշակութային ավանդույթները: Իսկ պատերազմից հետո, վերաբնակեցման հետևանքով տարածվելով ամբողջ Լեհաստանով՝ նախկին Լեհաստանի Սոցիալիստական Հանրապետությունում ինքնությունը և մշակութային ավանդույթները պահպանելու համար չունենալով անհրաժեշտ պայմաններ՝ սկսվեց այդ համայնքի ներկայացուցիչների ուժացման գործընթացը: Այժմ նրանց մեծ մասը հայերեն չգիտի, և կարելի է նրանց համարել լեհական հասարակության մեջ ամբողջովին ձուլված: 1989 թվականից հետո հայկական ծագում ունեցող հասարակական մի շարք գործիչների շնորհիվ զգալի աշխուժություն սկսվեց նախկին հայկական համայնքների այն ներկայացուցիչների շրջանում, որոնք ընդգրկված են Հայկական մշակութային ընկերության կազմում գործող հայկական մշակույթով հետաքրքրվողների օղակում և զբաղվում են հայ ժողովրդի պատմության ու մշակույթի մասին գիտելիքներ սերմանելով:

Հայկական ծագում ունեցող անձանց թիվը այժմ 8-ից 15 հազար է¹: Հայերը անկախ Լեհաստանում ստացան ազգային փոքրամասնությունների² կարգավիճակ, թեպետ «հայ լինելը» նրանց համար արդեն ազգային անկախության հարց չէ: Հայերը իրենց հիմնականում համարում են «լեհեր՝ հայկական ծագումով» կամ «Լեհաստանի հայեր, ովքեր ունեն հայկական արմատներ» (պատկանում են հայ կաթոլիկ եկեղեցուն): Լեհաստանում նրանք ցանկանում են ընդունված լինել որպես ազգային փոքրամասնության ներկայացուցիչներ: Նրանց առաջնորդները Լեհաստանում հայերի պատմության և մշակույթի տարածման գործում մեծ ներդրում ունեն և կապեր են հաստատում Հայաստանից վերջին ժամանակաշրջանում տեղափոխված հայերի հետ: Դա նկատվում է համատեղ կազմակերպված հավաքությունների ժամանակ, բիզնես համագործակցության, ինչպես նաև նոր ներգաղթածների երեխաների համար կիրակնօրյա դպրոցների ստեղծումով: Հաճախ նաև իրավական օգնություն են ցույց տալիս Հայաստանից այն արտագաղթածներին, որոնք Լեհաստանում իրենց բնակությունը օրինականացնելու խնդիրներ ունեն:

Նոր արտագաղթը հին համայնքի հայերի կողմից ընդունվում է որպես իրենց հայեցիությունը վերականգնելու և համայնքն աշխուժացնելու գործոն:

Հայերի հոսքը 1990-1996 թվականներին: Ըստ Է. Ռավենշտեյնի գաղթի տեսության՝ մարդ արարածն իր էությանը նստակյաց է, ուստի եթե որոշում է գաղթել, ապա դրա համար պետք է լինի առնվազն երկու նախապայման՝ «վանող» և «գայթակղող»: Առաջին նախապայմանը հիմնականում պատերազմներն են, բնապահպանական աղետները, սովը, հետապնդումները, երկրորդը՝ տեղեկությունները այն երկրների մասին, որտեղ կան կյանքի համար առավել բարենպաստ պայմաններ, քան տվյալ երկրում³: Նոր ժամանակներում հայերի՝ դեպի Լեհաստան գաղթը հետևանք էր միաժամանակ թե՛ մեկ և թե՛ մյուս նախապայմանի առկայության: Այդ նախապայմանները հետևանք էին Հայաստանում կատարվող այնպիսի իրադարձությունների, ինչպիսիք էին երկրաշարժը, դարաբաղյան պատերազմը և Խորհրդային Միության փլուզումը, որին հետևեց ամբողջ տնտեսական համակարգի վերափոխումը: Վերջինս Հայաստանում մի շարք հանգամանքների պատճառով ընթանում էր շատ դանդաղ և մեծ դժվարությամբ: Զգացվում էր ամեն ինչի, հատկապես էլեկտրաէներգիայի մեծ պակաս:

Հայերը հատկապես հիշում են 1991 թ. անկախության հռչակումից հետո անցկացրած առաջին ձմեռը: «Առաջին ձմեռը շատ անսպասելի էր:

¹ Այդ թվաքանակը վերցրել ենք հայերի մշակույթով հետաքրքրվողների օգուկից: Մի քանի ղեկավարների կարծիքով, ամենահավանական քանակը 3-4 հազարն է: Ըստ 2002 թ. Լեհաստանում անցկացված մարդահամարի տվյալների՝ ազգությամբ հայ միայն 1,1 հազար մարդ է ներկայացել, իսկ հայերենը որպես ազգային լեզու ընդունել է 872 մարդ (տե՛ս **Լոջինսկի Ս.**, Հավասարություն և տարբերություն: Ազգային փոքրամասնությունները Լեհաստանում 1989 թվականից հետո դեմոկրատական կարգուկանոնի մեջ, Վարշավա, 2005, էջ 102-104):

² Տե՛ս նույն տեղը, էջ 104:

³ Տե՛ս "The Laws of Migration"// "Journal of the Royal Statistical Society", 1885, № 48, էջ 167-235 և 1889, № 52, էջ 241-305:

Բավականին ցուրտ էր՝ մինուս 20 աստիճան ...: Հոսանք չկար, գազ չկար, նավթ չկար. շրջափակում էր: Այդպես ապրել հնարավոր չէր: Դեպքերեսիայի մեջ էինք ընկնում, հնարավոր չէր հոգեբանորեն դիմակայել: Կա դժոխք և դրախտ: Ես արդեն դժոխքը տեսել եմ: Այնտեղ այն ժամանակ դժոխք էր»:

«Սկսվեց Ադրբեջանի հետ հակամարտությունը: Ճանապարհները փակ էին: Լույս, ջեռուցում չունեինք: Գործարաններն ու ֆաբրիկաները չէին աշխատում: Հարմարավետություն կամ շվեյցարական բանկերում հաշվեհամար չէինք ուզում, այլ ցանկանում էինք ապրել մարդուն վայել կյանքով՝ լույս ունենալ, հաց գնելու դրամ...»:

Ջրուցակիցներիս նկարագրություններից երևում է, որ Հայաստանի անկախության հաստատման առաջին տարիների իրավիճակում զգալիորեն աղքատացավ հասարակությունը: Դժվար չէ հասկանալ, որ նախկին խորհրդային հանրապետություններում կարոտախտ էր առաջացել. բոլորը կարոտում էին հին կարգերը: Հայաստանում այդ կարոտը առավել ևս զգալի էր: Հայուհին, որն այժմ ապրում է Կրակովում, հիշում է այն օրերը որպես բարեկեցության անմոռաց ժամանակաշրջան. «Խորհրդային Միության տարիներին մենք շատ լավ էինք ապրում: Ոչ ոք չէր մտածում, որ գազ, հոսանք կամ տաք ջուր երբևէ չի լինի: Բոլորն աշխատում էին, յուրաքանչյուրը հնարավորություն ուներ իր ընտանիքը պահելու»:

Տնտեսության վերափոխումը, ինչպես ասվեց, ընթանում էր մեծ դժվարությամբ: Այն տարիներին Հայաստանում շատ քչերը գիտեին, թե ինչ բան է ազատ շուկան և ինչ օրենքներով է կառավարվում, ինչ է նշանակում մրցակցություն: Ամենամեծ խնդիրը կառավարությունն էր, որի դեմ ըստ էության մինչ այժմ հնարավոր չէ պայքարել: Դա առավել ևս զգում էին նրանք, ովքեր ցանկանում էին բիզնեսով զբաղվել: Այդ սկսնակ ձեռներեցներից մեկը, որն այժմ Վարշավայի Բանախա փողոցի վրա գտնվող շուկայում զբաղվում է մանրածախ առևտրով, այդ տարիները այսպես է հիշում. «Բենզինի լցակայան ունեի: Երբ փոխվեց համակարգը, բոլորն էին ուզում փող ունենալ: Առաջ եկավ մաֆիան: Բենզին գնելու համար 500 կմ-ոց ճանապարհի ամեն 10 կմ-ին կանգնեցնում էր ոստիկանությունը և զումար պահանջում: Իհարկե, դա իր բացասական ազդեցությունն ունեցավ: Ոչինչ չէր աշխատում, որովհետև հանկարծ պետականը դարձավ սեփական, իսկ նոր տերն ասում էր, որ ինքը 100 աշխատողի կարիք չի զգում, որ իրեն պետք է միայն 10 աշխատող: Այդպես 90-ը կորցրեց աշխատանքը»:

Մյուս գրուցակիցս, որը Լյուբլինի կայարանի հարևանությամբ զբաղվում է առևտրով, այսպես ներկայացրեց այն ժամանակվա իրավիճակը. «Մարդիկ սկզբից հավատում էին կառավարությանը, բայց հետո ամեն ինչ փոխվեց: Կոմունիզմ չկար արդեն, և սկսվեց այնպիսի բան, որին որևէ անվանում չեմ կարող տալ: Միգուցե դա կապիտալիզմ էր, բայց համոզված չեմ, քանի որ ով ինչ ձեռք էր բերել ծանր աշխատանքով, ամեն ինչ կորցրեց: Փոխվեց դրամի արժեքը. օրինակ՝ երկու մեքենայի գնով կարելի էր գնել ընդամենը երկու հաց»:

Այս ամենը հիմնականում, այսպես կոչված, «վանող» նախապայմաններ էին, որոնք նպաստեցին հայաստանցիների արտագաղթին:

«Յենց սկսեց վատանալ, մարդիկ անմիջապես սկսեցին մտածել, թե ուր գնալ»: Բացի այդ՝ արտագաղթին նպաստող ուրիշ նախապայմաններ էլ առաջ եկան. երիտասարդ տղամարդկանց համար հիմնականում բանակային ծառայությունից խուսափելու միջոց էր այն: Հայկական իշխանությունները, Ադրբեջանի և Թուրքիայի կողմից վտանգ զգալով, մեծացրին իրենց բանակը: Սակայն ոչ բոլոր ծնողներն էին ուզում, որ իրենց որդիները այնտեղ հայտնվեն, որդիները ևս միշտ չէ, որ ուզում էին. «Վախենում էի, որ որդիս բանակ կգնա, կտանեն պատերազմ: Ցանկանում էի որդուս պաշտպանել»:

Շատերի համար էլ արտասահման գնալու պատճառը կրթություն ստանալն էր, քանի որ 1990-ական թվականների առաջին կեսերից փլուզվեց նաև ամբողջ կրթական համակարգը. «Համարյա դպրոց չէինք գնում: Դասերը քսանրոպեանոց էին: Ցանը մոմի լույսի տակ էինք դաս սովորում: Իմ ծնողները ցանկանում էին, որ ես և եղբայրս Լեհաստանում ավարտենք ուսումը»:

Մյուս կողմից, 1989 թվից հետո նախկին սոցիալիստական երկրների, այդ թվում՝ Լեհաստանի հետ առանց մուտքի արտոնագրի երթևեկելու հնարավորություն ստեղծվեց: Հնարավոր դարձավ նաև շուկայական առևտրով զբաղվելու: Շարժառիթ էր նաև աշխարհը ճանաչելու հանգամանքը, որի հնարավորությունը չկար ԽՍՀՄ-ում. «Ես մեկնել եմ երկրից, որովհետև հնարավոր դարձավ շրջագայել, 1990 թվականից առաջ հնարավոր չէր: Երեսուն տարի մարդ ապրում է ու նոր փորձառություններ փնտրում: Ցանկանում էի եվրոպան տեսնել: Այսքանը»:

Լեհաստանի և նախկին Խորհրդային Միության երկրների միջև ապրանքների գների զգալի տարբերությունը, ճանապարհորդելու հնարավորությունը, ինչպես նաև արտասահմանցիների մուտքի և ելքի ազատության հնարավորությունը Լեհաստանում հանգեցրին այն բանին, որ 1990-ական թվականների սկզբին Խորհրդային Միությունում արտադրված ապրանքների առևտրով զբաղվելը Լեհաստանում բնակվելու համար դարձավ շահութաբեր ու զայթակղիչ:

Մեր ուսումնասիրություններից պարզվում է, որ հայերը նախապես որոշել էին արտագաղթել տնտեսապես հարուստ արևմտյան երկրներ, սակայն ծախսերը շատ էին, իսկ մուտքի արտոնագրեր ստանալը շատերի համար անլուծելի հարց էր: Լեհաստանը այդ առումով ամենաէժեքան էր և ամենահարմարը: Մի հազամանք ևս. ռուսերենի իմացությունը հեշտացնում էր մեր երկրում ապրելն ու հաղորդակցվելը: Այդ պատճառով երկար ժամանակ Լեհաստանը Բուլղարիայից հետո համարվում էր երկրորդը որպես հայերի արտագաղթի նշանակետ: Նրանք, ովքեր ավելի վաղ էին հաստատվել Լեհաստանում, հեռակետ էին դառնում ընտանիքի մյուս անդամների կամ հարազատների, հարևանների ու ծանոթների համար: Հետզհետե առաջանում էին, այսպես կոչված, «արտագաղթային ցանցեր», որոնք հեշտացնում էին մյուսների արտագաղթը:

«Իմ հայրը շատ բժախնդիր է որոշում կայացնելու մեջ: Նա հենց այնպես չէր արտագաղթի, եթե այստեղ չլիներ նրա ծանոթը: Այդ ծանոթն է մեզ հրավիրել և սկզբնական շրջանում օգնել: Ամուսինս ֆիրմա բացեց իր ընկերոջ օգնությամբ, որը վաղուց էր այստեղ բնակվում...: Երբ մենք եկանք, այդ ընկերը ֆիրմայի հետ կապված շատ խնդիրներ ուներ... Նրա կինը անուսնուս հետ հիմնեց նոր ձեռնարկություն և աշխատեց մեզ հետ


որպես հաշվապահ: Երախտապարտ ենք նրանց: Եկել ենք այստեղ, ինչպես մեր արյունակիցների մոտ կգայինք»:

Հայերի հիմնական արտագաղթը Լեհաստան տևեց մինչև 1996 թվականը, որից հետո նրանց հոսքը այնպես նվազեց, որ, լեհական ծառայությունների կարծիքով, հետագայում եկողները որակական նշանակություն չունեցան Լեհաստանում նոր համայնքի ձևավորման գործում:

Ժամանակակից լեհահայ համայնքը 1990-1996 թվականների արդյունք է:


Գծապատկեր 1

1994-2006 թթ. օրինական ճանապարհով Լեհաստան մուտք գործած ՀՀ քաղաքացիների քանակը



Գծապատկեր 2

Հայաստանի դիվանագիտական-հյուպատոսական վարչությունների կողմից 2004-2006 թթ. տրված վիզաների քանակը



Լեհաստանում վերջին տարիներին բնակություն հաստատած հայերի ստույգ թիվը հայտնի չէ: Ունենք միայն ոչ հավաստի տվյալներ և իրար հակասող վիճակագրություն, որը թույլ չի տալիս ի մի բերելու տարբեր կատեգորիաների արտագաղթածների տվյալները: Երկու պատճառ կա: Առաջին՝ հայերի մեծ մասը այստեղ ապրում է անօրինական, ինչը նշանակում է, որ հաշվառման մեջ չէ ոչ մի վարչությունում: Երկրորդ՝ լեհական ծառայությունների կարծիքով Լեհաստանում գտնվող հայերի զգալի մասն ունի Ուկրաինայի, Ռուսաստանի, նաև Վրաստանի քաղաքացիություն և վիճակագրական տվյալներով հանդես են գալիս որպես այդ երկրների քաղաքացիներ: Նրանցից շատերը, հնարավոր է, սկզբից էլ եղել են այդ երկրների քաղաքացիներ: Չի բացառվում, սակայն, որ ուրիշները (մասնավորապես Ուկրաինայի քաղաքացիություն ունեցողները) ընդունել են այլ երկրի քաղաքացիություն հենց Լեհաստան մուտք գործելու գործընթացը հեշտացնելու նպատակով:

Կասկածից վեր է, որ 1990-ական թվականներին եկած հայերի թիվը սկզբնական շրջանում ավելին էր, քան հիմա: 1995 թվականին, ոստիկանության հաշվարկների համաձայն, նրանց թիվը եղել է մոտ 100 հազար, որն այսօր թվում է ուռճացված, թեև չի բացառվում, որ առժամանակ այդքան հայեր ապրել են Լեհաստանում: Ներկայումս լեհական վարչությունների տվյալներով ստացվում են ավելի համեստ թվեր. դրանք տատանվում են 30-ից 40 հազարի սահմաններում: Պետական ծառայողները հակված են ընդունելու ներքևի սահմանը: Լեհաստանում Հայաստանի Հանրապետության դեսպանատան պաշտոնական հաշվարկներով լեհաստանաբնակ հայերի թիվն անհամեմատ ավելի պակաս է՝ ընդամենը 8 հազար:

2002 թվականին Լեհաստանում անցկացված մարդահամարով հայտնի դարձավ, որ մեզ մոտ մշտական (այսինքն՝ առնվազն 12 ամսից ավելի) բնակվում է մոտ 1082 նոր գաղթած հայ: Սակայն 1992 թվականից ժամանակավոր կամ մշտական գրանցում տրվել է Հայաստանի 3 հազարից ավելի քաղաքացու, իսկ լեհական քաղաքացիություն ստացել է 112 հայ:

Բացի այդ, սկսած 1992 թվականից, Հայաստանից եկած ավելի քան 5 հազար մարդ դիմում է տվել փախստականի կարգավիճակ ստանալու նպատակով: Ժնևյան 1951 թ. բանաձևի համաձայն՝ փախստական համարվում է այն անձը, ով «էթնիկական, դավանական, կրոնական կամ որևէ այլ խմբի պատկանելիության պատճառով, նաև քաղաքական հետապնդման հիմնավորված վախի հետևանքով գտնվում է իր մշտական ապրելավայրի՝ պետության սահմաններից դուրս և չի կարող կամ չի ցանկանում այդ պատճառով վերադառնալ տվյալ պետություն»⁴: Իսկ Հայաստանից եկածները, որոնք 1990-ական թվականների սկզբին փախստականի կարգավիճակ էին խնդրում, իրենց դիմումների մեջ նշում էին միայն, որ իրենց երկրում պատերազմ է, հոսանք, զազ և ջուր չկա՝ չհասկանալով, որ փախստականի կարգավիճակ չի տրվում այն անձանց, ովքեր իրենց երկիրը լքել են՝ տնտեսական պատճառներից դրդված, զինվորական ծառայությունից կամ նույնիսկ պատերազմից խուսափելու պատճառով: Կային նաև այնպիսիք, ովքեր պնդում էին, որ Եհովայի վկաներ են, սակայն իրականում չէին կարողանում դա ապացուցել:

Ինչպես երևում է հայերի շրջանում անցկացված ուսումնասիրությունից, դիմում գրելու հիմնական շարժառիթը եղել է իրենց բնակությունն օրինականացնելը և ոչ թե հետապնդումներից խուսափելը: Բնականաբար, նրանց դիմումները հիմնականում մերժվել են, և 1992 թվականից փախստականի կարգավիճակ տրվել է միայն 11 անձի, իսկ 10-ը ստացել է այսպես կոչված հանդուրժողական կացության իրավունք, որը հասկացվում է որպես լրացուցիչ պահպանության մի տեսակ: 1998 թվականին փախստականի իրավունք խնդրող հայ քաղաքացիների թիվն էապես պակասել է: Ներկայումս տրվում է տարեկան 20-40 դիմում:

Լեհաստանում հայկական նոր համայնքի հատկանշական գիծն այն է, որ եթե սկզբում այն կենտրոնացված էր հիմնականում մեծ քաղաքներում, ապա այժմ արտաքսումից խուսափելու նպատակով հայերը տարածված են ամբողջ Լեհաստանում: Հայեր կան Լեհաստանի համարյա բոլոր քաղաքներում, ավաններում, նույնիսկ գյուղերում, իհարկե համե-

⁴ Հոդված 1 Ա, օրենք 2, 1991 թ., Օրենսգիրք, № 119, 515 և 517 կետեր:

մատաբար ոչ մեծ խմբերով, որի շնորհիվ մնում են գրեթե աննկատ: Առանց չափազանցության, Լեհաստանում գրեթե յուրաքանչյուր շուկայում կարող եք գտնել առևտրով զբաղվող գոնե մեկ հայ:

Պաշտոնական այլ տվյալների համաձայն՝ 1990 թ. սկզբից Լեհաստան օրինական մուտք գործող հայերի թիվը տարեցտարի ավելացել է՝ 1996 թվականին հասնելով 25 հազարի, իսկ հետագայում աստիճանաբար նվազել է՝ 1999-2003 թթ. հասնելով տարեկան 2 հազարի: Մյուս կողմից, Արտաքին գործերի նախարարության տվյալներից երևում է, որ տարեկան մոտ 1,5 հազար հայ է ստանում մուտքի արտոնագիր: Նրանցից 75-80-ը գալիս է՝ Լեհաստանի բուհերում բարձրագույն կրթություն ստանալու: Հակառակ պաշտոնական համեստ տվյալների՝ ենթադրվում է, որ Լեհաստանում հայերի քանակն իրականում ավելի մեծ է, բայց, իհարկե, այնքան չէ, որքան ենթադրվում էր սկզբնապես:

Անօրինական ապրող արտագաղթածների թիվը նվազեցնելու նպատակով երկու անգամ՝ 2003 թ. և 2007 թ. հայտարարվեց, այսպես կոչված, համաներում: Նպատակն այն էր, որ հնարավորություն տրվի իրենց բնակությունն օրինականացնելու այն արտասահմանցիներին, որոնք Լեհաստանի տարածքում գտնվում էին անօրինական: Առաջին համաներումից օգտվեց 1081 հայ, իսկ երկրորդից՝ 421: Ճիշտ է, համաներման օրենքից օգտված արտասահմանցիներից Հայաստանի քաղաքացիների թիվն ամենից մեծն էր, սակայն սպասվում էր ավելին: Դա հետևանք էր այն բանի, որ նախ՝ համաներման մասին տեղեկատվությունը չէր հասել բոլոր շահագրգիռներին, երկրորդ՝ այն սահմանում էր որոշ պայմաններ. պետք էր փաստաթղթերով ձևակերպել և ապացուցել 1997 թվականից մնալու հիմքերն ու նախադրյալները:


Աղյուսակ

Լեհաստանից արտաքսվածների թիվը

Քաղաքացիություն	Գլխավոր	ԼՀ-ից արտաքսվելու պատճառները					Փախստականի կարգավիճակ չստանալուց հետո երկրից հեռանալու որոշում
		սահմանը օրինական հատում	մուկն արտաքսվելու	մուկն արտաքսվելու	մուկն արտաքսվելու	մուկն արտաքսվելու	
Ընդհանուր	3 030	921	852	16	13	1 169	59
<u>Հայաստան</u>	<u>207</u>	<u>119</u>	<u>63</u>	<u>3</u>	-	<u>21</u>	<u>1</u>
Չինաստան	55	30	10			15	
Վիետնամ	215	187	17	1		7	3


Գծապատկեր 3

Լեհաստանում ժամանակավոր ձերբակալված և դատապարտված հայերի թիվը




Գծապատկեր 4

Արտաքսման մասին ընդունված որոշումների և ի կատար ածվածների քանակը



Գծապատկեր 5

Մուտքի մերժման պատճառները



Լեհաստանում ապրող հայերի հատկանշական գծերը և տնտեսական վիճակը: Հայկական նոր համայնքը Լեհաստանում վիետնամական համայնքից հետո ամենաստվարն է⁵: Այդ համայնքի անդամների ճնշող մեծամասնությունը 30-50 տարեկան կանայք և տղամարդիկ են, որոնք առնվազն 10-20 տարի գտնվում են Լեհաստանում: Նրանք հիմնականում կազմում են ընտանիքներ, ունեն դպրոցահասակ երեխաներ, որոնք հաճախում են լեհական ուսումնական հաստատություններ: Սակայն նոր համայնքի ներկայացուցիչները շարունակ ֆինանսական խնդիրների առջև են կանգնած: Պատճառն այն է, որ Հայաստանից արտագաղթածները Լեհաստան են եկել առանց որևէ սկզբնական կապիտալի, իսկ այստեղ մինչև այժմ չեն կարողացել այն ձեռք բերել գերազանցապես գրանցման և աշխատանքի իրավունքի բացակայության, ինչպես նաև մասնագիտությամբ աշխատելու անհնարինության պատճառով: Հարկ է նշել, որ 1990-ական թվականներին Լեհաստան արտագաղթած հայերը հիմնականում զբաղվում էին ԽՍՀՄ-ում արտադրված ապրանքների վաճառքով (զլխավորապես էժան ապրանքի կամ հանրաճանաչ ապրանքանիշերի կեղծված արտադրանքի, տնտեսական ապրանքների, տեսահեռախոսի ձայնասկավառակների, ոգելից խմիչքների), որոնք բերում էին իրենց հետ: Ժամանակի ընթացքում, երբ իրենց երկրից այդ ապրանքների արտահանումը դարձավ ոչ շահութաբեր, նրանք սկսեցին զնել (հաճախ նմանատիպ ապրանք) Արևելքից եկած այլ վաճառականներից, հիմնականում վիետնամցիներից: Ինչպես երևում է հայերի տված բացատրությունից, պատճառն այն էր, որ հայերը չունեին անմիջական կապեր արտադրողների հետ, որպեսզի ապրանք վերցնեին ապառիկ, քանի որ մեծ խմբաքանակով զնելու համար չունեին անհրաժեշտ դրամազուլուխ, իսկ վիետնամցիներն ունեին թե՛ մեկը և թե՛ մյուսը: Ուստի վերջիններս դառնում էին միջնորդ անմիջական արտադրողի և հայ առևտրականների միջև:

Մասնագիտանալով ցածրորակ, էժան, երկրորդ ձեռքից ստացված ապրանքների առևտրի մեջ՝ սկզբից ևեթ այդ բիզնեսը ֆինանսական առումով շահավետ չէր հայերի համար: Նման առևտուրը տարեցտարի դառնում էր էլ ավելի ոչ շահավետ՝ կենցաղային ծախսերի գների բարձրացման հետ կապված: Չնայած մեծ աշխատասիրությանը, միմյանց սատար կանգնելուն և համագործակցությանը՝ անհրաժեշտ դրամազուլուխ չունենալու պատճառով նրանցից շատերին այդպես էլ չի հաջողվում սկսել ավելի լայնածավալ աշխատանքային գործունեություն կամ զբաղվել առավել շահավետ բիզնեսով: Մոտ 15 տարի աշխատելով Լեհաստանում՝ նրանց մեծ մասը դեռ շուկաներում առևտուր է անում: Տեղեկություն ունենք միայն նոր արտագաղթած մի հայի մասին, որը հասել է ֆինանսական մեծ հաջողությունների. ունի կոսմետիկա արտադրող ֆաբրիկա: Գիտենք նաև մի քանի տասնյակ անձանց մասին, ովքեր ունեն լավ գործող ռեստորաններ և խանութներ, ուստի կարող են համարվել միջին խավի ներկայացուցիչներ: Նրանք հիմնականում, այսպես կոչված, պիոներներն են, որոնք Լեհաստան են եկել սահմանները բացվելու հենց առաջին տարիներին և, իհարկե, բավականաչափ գումարով, որը շատ

⁵ Այստեղ հաշվի չի առնված Ուկրաինայից գաղթածների ավելի ստվար զանգվածը: Նրանց գաղթը հիմնականում ժամանակավոր է, ոչ մշտական:

կարևոր հանգամանք է: Օրինակ՝ գրուցակիցներիցս մեկը Հայաստանից բերված գումարով Կրակովում բացել է ֆիրմա և այժմ արդեն ունի մի քանի անշարժ գույք (համեստությունից ելնելով՝ ջրանկացավ թվարկել բոլորը): Մեկ ուրիշ հայ ընտանիք հաջողությունների է հասել, քանի որ կարողացել է միանգամից բար բացել Լոժ քաղաքում, իսկ այժմ լավ գործող ռեստորան ունի Վարշավայում:

Ընդհանուր առմամբ, հայկական նոր համայնքը Լեհաստանում ֆինանսական հաջողությունների չի հասել, ուստի դանդաղում է հասարակական և մշակութային ինտեգրման գործընթացը: Օրինակ՝ Վարշավայում ապրող հայերը ամսական վաստակում են մոտ 3-4 հազար զլոտի (մոտ 1000 եվրո⁶), որի կեսը ծախսվում է որպես բնակարանի վարձ, իսկ մյուս կեսը հատկացվում է տրանսպորտի, հեռախոսի, հագուստեղենի և երեխաների դպրոցական ծախսերին: Չնայած դրան՝ մեր ուսումնասիրություններից երևում է, որ կարողանում են մի քիչ տնտեսել՝ ամսական մոտ 100 եվրո (300-400 զլոտի լեհական փողով), որը ուղարկում են իրենց երկրում ապրող հարազատներին: Ու որովհետև բոլորովին չեն վստահում լեհական բանկային համակարգին, ուստի այդ գումարներն ուղարկում են այլ ճանապարհներով: Հետևաբար, ուղարկված գումարների չափի մասին չկա պաշտոնական տեղեկատվություն:

Հայկական համայնքի ֆինանսական իրավիճակը չափավոր է նախ և առաջ նրա անդամների չկարգավորված իրավական կարգավիճակի պատճառով: Հայերի հիմնական մասը, որ եկել է Լեհաստան, չի պատկերացրել, որ անհրաժեշտ են աշխատանքի թույլտվություն կամ ձեռնարկություն բացելու իրավունք: Դա նախ և առաջ հետևանք է լեհական օրենքների չիմացության, համապատասխան խորհրդատուների պակասի, ինչպես նաև բյուրակրատիայի դեմ չպայքարելու: Բացի այդ՝ նրանց մեծ մասը գումար չունի ո՛չ փաստաբանների, ո՛չ էլ լեհական վարչական աշխատողներին կաշառելու համար:

Մեր կողմից հարցվածներից շատերի կարծիքով Հայաստանի Հանրապետության դեսպանությունը քիչ է հետաքրքրված իր քաղաքացիներով՝ պատճառաբանելով, որ չի կարող պաշտպանել իր այն քաղաքացիներին, ովքեր անօրինական են ապրում և ոտնահարում են լեհական օրենքները: Հետաքրքրվում է միայն այն անձանցով, որոնք խույս են տալիս պարտադիր զինվորական ծառայությունից: Մինչդեռ գրեթե մույն վիճակում գտնվող վիետնամցի արտագաղթածներն իրենց դեսպանատան հովանավորությանն ու աջակցությանն են արժանանում լեհական իշխանությունների հետ կապված բոլոր հարցերում:

Ի տարբերություն վիետնամցիների, որոնք իրենց գրանցումը օրինականացնում են կեղծ ամուսնություններով կամ ֆիրմաներ բացելով, իսկ ծայրահեղ դեպքերում նաև՝ վարչական աշխատողներին կաշառելով, հայերն ընտրել են փախստականի կարգավիճակ պահանջելու կամ ոչ օրինական մնալու ստրատեգիան, որը պակաս արդյունավետ է: Ավելին, փախստականի կարգավիճակ ստանալու անարդյունավետությունը հանգեցնում է այլ կարգի մի շարք բարդությունների, քանի որ զրկում է օրինական ապրելու մնացած հնարավորություններից: Տեղական իշխա-

⁶ 2008 թվականի տարադրամի փոխարժեքի համաձայն:

նութունները գրանցում չեն տալիս այն մարդկանց, որոնք նախկինում բացասական պատասխան են ստացել փախստականի կարգավիճակ խնդրելիս:

Հայերը ոստիկանության կողմից շատ հազվադեպ են արտաքսվում: Լեհական ոստիկանության նպատակը հայերին վտարելը չէ, այլ տնտեսական հանցանքների բացահայտումը (ոչ ակցիզավորված ապրանքների վաճառք և մտավոր սեփականության օրենքի խախտում): Լեհաստանում գտնվելով ապօրինի՝ հայերը ոստիկանության ձեռքն են ընկնում միայն պատահաբար՝ տեսահեռային ձայնասկավառակներ կամ առանց ակցիզի ոգելից խմիչք և ծխախոտ վաճառելիս: Շատ հաճախ իրենց բնակավայրում մտերիմ լեհերի կամ նույնիսկ ոստիկանության կողմից հովանավորվում են, և դա գիտակցելով՝ նրանք այստեղ իրենց համեմատաբար անվտանգ են զգում, քան ուրիշ երկրներում: Օրինակ, նրանցից մեկի կարծիքով, իրենց, ըստ էության, ոչինչ չեն կարող անել, իսկ դեպորտացիան քիչ հավանական է»: Այս բառերի հեղինակը գովում է Լեհաստանի պայմանները, քանի որ մինչ այդ ապրել է Լատվիայում, որտեղ, իր բառերով ասած, «կարելի էր փող աշխատել, բայց ռիսկը շատ էր... Այնտեղ ոստիկանությունը տներն էր մտնում, այստեղ ոչ ոքի չի հետաքրքրում, թե ես որտեղ եմ ապրում»:

Հարկ է նշել, որ հայերը Լեհաստանում հիմնականում համարվում են որպես լավ տեղայնացված գաղթականներ: Չնայած կյանքի դժվար պայմաններին՝ նրանք իրենց վիճակից չեն բողոքում: Գիտակցելով ինչից են փախել՝ լեհերին հաճախ շատ երախտապարտ են: Նրանցից ամենաաղքատները նույնիսկ չեն հայտնվում թշվառ վիճակում: Մուրացկան կամ սոցիալական խնամակալությունից օգտվող ոչ մի հայի չես հանդիպի: Ծայրահեղ դեպքում գերադասում են Հայաստան վերադառնալ, քան մուրացկանություն անել: Նրանցից շատերը հեշտությամբ սովորել են լեհերեն, իրենց երեխաներին լեհական դպրոցներում տվել կրթության, ունեն լեհ շատ ծանոթներ և ընկերներ: Թեև հայերը Լեհաստանում մեծ խմբավորումներ չեն առաջացնում և դժվարություններ ունեն, բայց միմյանց հետ շփումների մեջ շատ լավ կազմակերպված են: Պետք է ասել, որ նրանցից շատերը կատարում են բավականին ծանր աշխատանք և հաճախ ժամանակ և ցանկություն չեն ունենում հասարակական գործունեությամբ զբաղվելու: Բայց և այնպես, ստեղծվում են հասարակական կազմակերպություններ և հիմնադրամներ: Ակտիվությունը համեմատաբար մեծացել է վերջին տարիներին: Թեև լեհերի հետ արագորեն ինտեգրվում են, սակայն պահպանում են ազգային ինքնագիտակցությունը և հայրենասեր են. «Երբ մարդը հայրենիքի կարոտն է զգում, նշանակում է, որ այն իր սրտում է, իսկ դա ամենակարևորն է... Եթե ապրում ես լեհի պես, չի նշանակում, որ հայ չես: Երբ լսում եմ Հայաստան բառը, շատ հաճելի զգացում եմ ունենում՝ կարծես լսում եմ անձնական, շատ հարազատ մի բան: Այդ ժամանակ աչքիս առաջ են կանգնում իմ տունն ու ընտանիքը»:

Ինչպես ասվեց, հայերը կապեր ունեն նաև հին համայնքի հետ, չնայած նրանց միջև տարբերությունը բավականին մեծ է: Արտագաղթածների այս երկու խմբերը չունեն ընդհանուր հետաքրքրություններ: Նոր արտագաղթածները չեն մասնակցում Հայկական մշակութային ընկերու-

թյան հանդիպումներին: Այդ ընկերության ղեկավարը իմ այն հարցին, թե ինչքան մարդ է հաճախում նոր գաղթածներից, պատասխանեց. «Օրինակ, այս ընթացքում, երբ անցկացրինք հայկական մշակույթի օրեր, քիչ մարդ էր եկել, մեծամասնությունը լեհեր էին: Սովորական հանդիպումներին մասնակցում է 10-15 մարդ: Պատահում է, որ ոչ ոք չի գալիս, հիմնականում մոբիլիզացվում են բացառիկ հանդիսավոր օրերին, օրինակ՝ 2004 թվականին Կրակովում ընկերության կազմակերպած հայկական խաչքարի բացման արարողությանը, որը նվիրված էր 1915 թվականի հայերի ցեղասպանությանը»:

Ջարմանալի չէ նոր գաղթածների ցածր ակտիվությունը, քանի որ նրանց չեն հետաքրքրում իրենց համար վերացական թեմաներ, ինչպիսիք հին հայերի համար են, օրինակ՝ հին Լվովի եկեղեցիների որմնանկարները: Այս թեման հաճախ է քննարկվում նրանց հանդիպումներում⁷: Թեև լեհահայերը միատարր գաղութ հիմնելու փորձեր են անում, որպեսզի լեհահայոց համայնքը ներկայացնեն Հայկական սփյուռքի համաշխարհային կոնգրեսում, միևնույն է, դժվարությունները շատ են. ամենամեծ խոչընդոտը հայերի սփռվածությունն է ամբողջ Լեհաստանով մեկ:

Լեհերի վերաբերմունքը հայերի հանդեպ: Արտասահմանցիների հանդեպ վերաբերմունքը միշտ էլ հիմնված է եղել ընդհանրացումների, այդ թեմայի շուրջ ընդունված կարծրատիպերի և հակասական կարծիքների վրա: Սկզբնական շրջանում հայերը լեհերի կողմից ԽՍՀՄ ուրիշ ազգություններից չէին տարբերվում և հիմնականում ընդունվում էին իբրև «ռուսներ»: Ժամանակի ընթացքում սկսեցին տարբերվել իրենց բնավորության գծերով և շատ միջավայրերում դրականորեն են ընդունվում: Լեհերը ընդհանուր առմամբ հենց սկզբից հանդուրժել են նրանց՝ շուկայում առևտուր անելու փաստը, հիմնականում՝ 1990-ական թվականներին, քանի որ մեր հայրենակիցները այդ տարիներին իրենք էին նման միջոցով դրամ վաստակում, և մինչ այժմ էլ շատերը շարունակում են: Շատ հազվադեպ են կոնֆլիկտներ առաջանում լեհ և հայ վաճառականների միջև, քանի որ հայերը նրանց համար մրցակից չեն: Լեհերի համար հայերը համարվում են հանգիստ, ժպտերես, ընկերասեր մարդիկ, որոնք արագ հարմարվում են ցանկացած իրավիճակի, արագ սովորում լեհերենը: Այն փաստը, որ քրիստոնյաներ են և եղել են ռուսական տիրապետության տակ, նույնպես դրականորեն է ազդել լեհական հասարակության կարծիքի ձևավորման վրա: Հասարակական տարբեր միջավայրերում հայերը բոլորին ծանոթ են և սիրելի, ներառյալ ոստիկանությանը: Եթե առևտուր չեն անում անօրինական ապրանքներով, տեղական ոստիկանության մտքով անգամ չի անցնում անհանգստացնել նրանց: Ի տարբերություն վիետնամցիների, որոնց դեմ տեղական իշխանությունները միշտ են բողոքներ ներկայացնում կենտրոնական իշխանություններին, հայերի նկատմամբ ոչ մի նշանակալից բողոք արձանագրված չէ:

Լեհաստանում հայկական համայնքի ակտիվացման ՆԳՆ նախագիծը: Հայերին դրականորեն են ընդունում ոչ միայն սովորական քաղաքա-

⁷ Տե՛ս **Ժետեկ Ռ.**, Ինքնություն և կրոն: Հայերը կրակովյան և լվովյան համայնքներում, Կրակով, 2008, էջ 217:

ցիները, այլև կառավարական վարչակազմը: Վերջերս ներքին գործերի նախարարության միգրացիոն քաղաքականության դեպարտամենտի կողմից գործի դրվեց Լեհաստանում հայկական համայնքի ակտիվացման և համայնք-հայրենիք կապի զարգացման նախագիծը: Այն նպատակ ունի Հայաստանում ապրող հայերին, մասնավորապես Ադրբեջանից գաղթած փախստականներին օգնություն ցույց տալ, ինչպես նաև աշխուժացնել հայկական համայնքի գործունեությունը: Սկզբնական շրջանում պլանավորված էր Կապան քաղաքի քոլեջներից մեկը կահավորել բժշկական սարքավորումներով և ապահովել գրենական պիտույքներով ու դասագրքերով: Նախագիծը ֆինանսավորում էր Լեհաստանի ներքին գործերի նախարարությունը: Թեև այն համեստ սկիզբ ուներ, սակայն պետք է ընդգծել այդ նախագծի բացառիկությունը, քանի որ սովորական բան չէ, երբ կառավարական վարչակազմը զբաղվում է նմանատիպ գործունեությամբ: Ենթադրվում է, որ կառավարական վարչակազմի հետ սկզբնական համագործակցությունից հետո համայնքը հետագայում ինքնուրույն կպատրաստի զարգացման նախագծեր և ինքն էլ կֆինանսավորի այն: Այդ նախագծից հետո սպասվում է կառավարության և համայնքի միջև մշտական համագործակցություն, որը կարող է կարևոր դեր խաղալ ինչպես հայրենիքին օգնելու, այնպես էլ Լեհաստանի տարածքում Հայաստանի քաղաքացիների փաստաթղթերն օրինականացնելու գործընթացը արագացնելու գործում:

Եզրակացություն: Մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանից արտագաղթածների հասարակական և մշակութային ինտեգրացիան Լեհաստանում ընդհանուր առմամբ կարելի է համարել շատ լավ: Հարկավ, կան մի շարք դժվարություններ, որոնցից ամենահիմնականը պետական կառույցների հետ ունեցած ոչ բավարար հարաբերությունն է, որի վկայությունը մեծ թվով անօրինական ապրող անձանց առկայությունն է: Այս առումով հայկական համայնքի ապագան Լեհաստանում հաստատուն չէ: Մի կողմից նյութական հաջողությունների պակասը կարող է նրանց մոտ Հայաստան վերադառնալու ցանկություն առաջացնել, բայց կա նաև դրան հակազդող գործոնը. հենց նույն նյութականի պատճառով իրենց հայրենակիցները շարունակում են արտագաղթել: Փաստն այն է, որ սկսած 1997 թվականից՝ հայկական նոր համայնքի անդամների թիվը հետզհետե նվազել է: Հետևաբար նրանք կարող են տեղափոխվել այլ երկրներ:

Մեր ուսումնասիրություններից պարզ է դառնում, որ կա գաղթելու երեք ուղղություն: Առաջինը՝ Արևմտյան Եվրոպայի երկրներ (հիմնականում՝ Գերմանիա և Ֆրանսիա): Դա առավել դյուրին դարձավ Լեհաստանի՝ Շենգենյան գոտի մուտք գործելուց հետո: Երկրորդ՝ Ռուսաստան և Ուկրաինա, մանավանդ որ այդ երկրներում իրավիճակը լավացել է, և կարելի է նույնքան շահույթ ստանալ, որքան Լեհաստանում, մինչդեռ ապրուստի միջոցներն ավելի էժան են, իսկ հայրենիքի հետ կապվելը՝ ավելի հեշտ: Եվ վերջապես, երրորդ՝ վերադառնալ հայրենիք: Այս վերջինը հազվադեպ է տեղի ունենում, թեպետ հայրենիք վերադառնալու մասին համարյա բոլորն են խոսում: Ընդհարապես, արտագաղթածներն ունեն «վերադարձի իրենց առասպելը», որն օգնում է ուրիշ երկրում ապրելուն: Դա

այն է, որ ինչ էլ լինի, միևնույն է, վերջին հանգրվանը հայրենիքն է: Հետաքրքրական են նրանց մտքերն այդ թեմայի շուրջ. «Ուր էլ գնաս, միևնույն է, վերջին կանգառը Հայաստանն է: Հայրս Լեհաստանում գտնվելու առաջին իսկ օրից ասել է, որ այստեղ ոչինչ չպլանավորենք, քանի որ մի օր հաստատ վերադառնալու ենք Հայաստան»:

Վերադարձողների թվի մասին տեղեկություն ընդհանրապես չունենք, թեև որոշ թվով հայեր մշտապես կապի մեջ են Հայաստանում Լեհական դեսպանատան հետ: Դրանք այն անձինք են, որոնք երկար ժամանակ ապրել են Լեհաստանում և հոգեպես կապված են մեր երկրի հետ:

Այսպես թե այնպես, պարզ է, որ համայնքը ներկայումս զարգացող չէ և այլևս չի համալրվի դրսից: Կարելի է ենթադրել, որ հետզհետե ավելի կպակասի, թեև, իհարկե, կան մարդիկ, որոնք օրինականացրել են թե՛ իրենց և թե՛ Լեհաստանում մեծացած և կրթություն ստացած իրենց զավակների փաստաթղթերը: Նրանք, հավանական է, Լեհաստանում կմնան ընդմիշտ ու իրենց կյանքի պատմությամբ կհարստացնեն Լեհաստանում հայկական համայնքի առանց այն էլ հարուստ պատմությունը:

МАЧЕЙ ЗОНБЕК – *Армяне в Польше: новая община (1990–2007)* – В статье затрагиваются вопросы, связанные с интеграцией армян, эмигрировавших в постсоветские годы из РА в Польшу. Обстоятельно исследуя условия жизни армян, обосновавшихся в Польше на протяжении последних двух десятилетий, трудности, с которыми они столкнулись, и процесс их адаптации, автор обращает внимание на ряд факторов, как способствующих, так и препятствующих этому процессу. К первым автор относит наличие в Польше старой армянской общины, христианскую веру армян, их умение сравнительно легко приспосабливаться к новой среде, браки с местными жителями. А факторы, препятствующие или противодействующие адаптации, – это отсутствие законного вида на жительство, низкий жизненный уровень, незнание польского языка, намерение рано или поздно вернуться на родину. Анализируя различные факторы, автор приходит к следующему выводу. В целом польское общество доброжелательно настроено к армянам, а государственные структуры предпринимают определенные шаги, чтобы облегчить им адаптацию. Тем не менее, динамика развития армянской общины такова, что за указанные десятилетия число въехавших в Польшу армян неуклонно сокращается: с одной стороны, снизилось число новоприбывших, а с другой – после того, как Польша вошла в шенгенскую зону, увеличилось число армян, эмигрирующих из страны. Часть из них направляется в государства Восточной Европы, основная же масса – на Украину, где бытовые условия несравнимо мягче, чем в Польше. Наконец, кое-кто возвращается в Армению, где продолжает поддерживать связи с польским посольством. Следовательно, лишь немногие из армян, иммигрировавших в постсоветские годы в Польшу, навсегда поселятся в этой стране и станут ее постоянными гражданами.

МАЧЕЙ ЗОНБЕК – *Armenians in Poland. The new community (1990-2007)*. - The paper discusses issues related to the integration of the Armenians who immigrated to Poland from the Republic of Armenia in the Post-Soviet period. The author makes a thorough study of life conditions of those Armenians who sought shelter in Poland, considers the challenges they faced, and discusses how they got adapted to

the country. He distinguishes between the factors that contributed to their adaptation and those that hindered it. Thus, the existence of the ancient Armenian community in Poland, the faith of the Armenians, their flexibility and marriage to the locals are considered to be contributing factors. The hindering factors include the absence of legal documents, the low living standard of the immigrants, not speaking the language, the desire to repatriate, etc.

All of the mentioned factors lead the author to a conclusion that although the Polish society is generally positively disposed towards the Armenians and the state structures take certain measures to ease the adaptation process for the Armenian immigrants, the dynamics of development in the Armenian communities shows that the number of immigrants to Poland has significantly dropped over the past two decades due to the fact that there are fewer Armenians immigrating to Poland and that more and more people are inclined to leave Poland after the country's entry to Schengen zone. Some immigrants tend to leave for Western European countries but most people prefer Ukraine, as the country boasts milder life conditions than Poland. Finally, some immigrants repatriate to Armenia where they maintain their relationships with the Embassy of Poland. Obviously, very few Armenian immigrants of the Post-Soviet period will settle down in Poland and claim permanent residency.